ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/3 «08» 01 2026 թ.

«ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ (ՀՎՀՀ 08287363)

Հասցե՝ Կիևյան Փ. / Շ / 8 / 62 ԲՆ. Արաբկիր 0028
Հեռ.՝ 091575572, էլ.հասցե՝ sopranoarm@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) միջև 14.05.2025 թվականին կնքված ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2025/Ա-69-4 ծածկագրով «հատուկ նպատակային այլ նյութերի» ձեռքբերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը չի կատարել ստանձնած պայմանագրային պարտավորությունները, մասնավորապես՝ Պայմանագրի շրջանակներում Վաճառողը Պայմանագրի մատակարարման վերջնաժամկետին Գնորդին պետք է հանձներ 14-րդ չափաբաժնով (42411500/4 ԳՄԱ) ամբարձիչ երկաթուղային, 16-րդ չափաբաժնով (42411700/10 ԳՄԱ) ամբարձիչ հիդրավլիկ, 18-րդ չափաբաժնով (34911240/4 ԳՄԱ) հրշեջ մեքենայի սանդուղք (երեք ծնկանի), 19-րդ չափաբաժնով (34911240/5 ԳՄԱ) հրշեջ մեքենայի սանդուղք (ձող սանդուղք) և 22-րդ չափաբաժնով (35111240/11 ԳՄԱ), օդաճնշիչ զենք-նետահար, սակայն վերոնշյալ ապրանքները չեն մատակարարվել:

Համաձայն Պայմանագրի 2.1.7 կետի Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը. 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 8.11-րդ կետով՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը միակողմանի ամբողջությամբ լուծում է ՀՀ ներքին գործերի նախարարության և «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության միջև 14.05.2025 թվականին կնքված «ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2025/Ա-69-4» ծածկագրով պայմանագիրը: Պայմանագիրը կհամարվի միակողմանի ամբողջությամբ լուծված սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը տրվում է 5 օրացուցային օր իր կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներ՝ 1 659 000 /մեկ միլիոն վեց հարյուր հիսունինը հազար/ ՀՀ դրամ որակավորման ապահովման և 1 106 000 /մեկ միլիոն հարյուր վեց հազար/ ՀՀ դրամ պայմանագրի ապահովման համար ներկայացված գումարները ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության «900005000758» գանձապետական հաշվին փոխանցելու նպատակով, ինչպես նաև Պայմանագրի 6.2 կետով սահմանված տույժ՝ 134 աշխատանքային օրերի նկատմամբ, որը կազմում է 741 020 /յոթ հարյուր քառասուն հազար քսան/ ՀՀ դրամ և Պայմանագրի 6.3 կետով սահմանված տուգանքը, որը կազմում է 55 300 /հիսունհինգ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ներքին գործերի նախարարություն՝ ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու և վճարման կտրոնները չներկայացնելու դեպքում «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ընկերության տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին, իսկ Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը՝ պայմանագրի ապահովում և որակավորման ապահովում, սահմանված կարգով կներկայացվի «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲ ընկերություն վերոնշյալ գումարները գանձելու նպատակով:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

Գնումների համակարգման բաժին
Կատարող՝ Ա. Սարգսյան
Հեռ.՝ 010-59-61-52